№ 39. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3. 1874 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3. № 39.

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 5 ռուբլ, կէս տարվանը 3 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի Тифлисъ, Редакція „Мшакъ.“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզվով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառից մի կոպէկ։

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եւրոպական գումարները Կովկասում։—Ներքին տեսութիւն։ Մեր վիճակաւոր բարեկարգիչները։ Աստրախանի Հայերը և զինուորագրութիւնը։ Նամակ Զեբրայիլից։ Նամակ Բագուից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Քաղաքական տեսութիւն։ Արշաւանք դէպի հիւսիսային բևեռը։—Խառն լուրեր։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Շնորհալի և պարագայիւր։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Այն ժամանակները անցել են, երբ մի երկիր, փակ, բոլոր յարաբերութիւններից շրջապատող աշխարհի հետ զուրկ, կարող էր ինքնուրոյն թէև դանդաղ կերպով զարգանալ։ Պահանջները նորա մէջ չէին կարող յանկարծակի ծնել, ուրիշն և լրացվում էին հետզհետէ, արդիւնաբերութիւնը չը պէտք է շտապէր շուտ զարգանալու, այլ շարունակում էր իր հանդարտ ընթացքը։

Բայց ժամանակները փոխվել են, եւրոպական կեանքը երկրագունդի ամենայն անկիւնները մուտք է գործում, նա ամեն տեղ զարգացնում է պահանջներ։ Թէև Եւրոպան իր համաշխարհային առուտուրով մի կողմից լրացնում է այն պահանջները, որ ինքն յարուցել է, բայց միւս կողմից և այն երկիրներից, որոնք պատրաստ են նորա քաղաքակրթութիւնը ընդունելու, աշխատում է հանել այն հում նիւթերը, որոնք նորա արդիւնաբերութեան համար կարող են պիտանի լինել։

„Մշակի“ 36 համարի մէջ տպած „Կովկասի արդիւնաբերութիւն“ յօդուածի առիթով լավեցան հետևեալ դատողութիւններ՝ „դուք դատապարտում եք մեր գումարատէրերին, նրանց հարստահարող և իրանց օգուտը չը հասկացող անուանելով, բայց միթէ մեղ չեն հարստահարելու օտար գումարատէրերը, եթէ նրանց յաջողի մեր երկրի մէջ հաստատ արմատներ գցել։“

Եւրոպական գումարատէրերը մեղք են համարում անտես առնել այն օգուտները, որ նրանք կարող են ստանալ այս կամ այն երկրից և նորա թէ բնական, թէ արուեստական արդիւնքներից, բայց նրանց գործունէութեան եղանակը բոլորովին տարբեր է այն մանրավաճառների պօլիտիկայից, որին հետևում են մեր գումարատէրերը։

Ասենք մի եւրոպական ընկերութիւն մուտք է գործել մեզ մօտ, նա կամենում է, ասենք, մի հանք բովագործել,—դորա համար հարկաւոր են մշակներ, որ նա չէ կարող բերել իր հետ օտար երկիրներից, այլ աւելի յարմար է համարում ոչ միայն տեղացիներին աշխատեցնել, այլ և մինչև անգամ նրանց դաստիարակել այս աշխատանքի համար։ Նա զիտէ որ մի տեղացի թէև սկզբում գուցէ անընդունակ է աշխատանքի այն մեծ քանակութեան, որին սովոր է եւրոպական մշակը, բայց վարժվելով, նա աւելի պիտանի կը լինի քան թէ այդ վերջինը, որովհետև աւելի սովոր է իր կլիմային, իր երկրի կերակուրին, չի ենթարկվիլ այնքան հեշտ տիրապետող հիւանդութիւններին և այլն և այլն։

Եւրոպական գումարատէրը գուցէ մշակի վերա չի նայիլ մարդկային կէտից այլ կը տեսնի նորա մէջ մի գործող ոյժ, որ նա պէտք է խնայի։ Նա կը խնայի իր մշակներին և մանաւանդ ընդունակներին, նրանց ձոխ կերպով կը վարձատրի, նրանցից աւելի արդիւնք և օգուտ ստանալու համար։ Եւ ո՞ր մշակ կը հրաժարվի թէև սաստիկ և անընդհատ աշխատանքից, երբ նա տեսնում է որ նորա ամեն քայլը գնահատվում է և վարձատրվում է։

Կովկասցին միայն ծոյլ է երբ նա աշխատում է իր տէրերի համար, որովհետև փոխանակ վարձատրութեան և քաջալերութեան, նա ժառանգում է միայն հայհոյանք և երբեմն ստիպված է ամիսներով առանց վարձի աշխատել։ Նորա այստեղի տէրը իր վարմունքով նորան չէ դրդում դէպի կատարելագործութիւն, կատարելագործվել նրան ոչինչ օգուտ չէ տալիս, նա առաջ չի գնալ, նրա դրութիւնը չի բարելաւանալ, նորա ձիգն չի գնահատվիլ։

Եւրոպացին ընդհակառակ, գուցէ կրկին ոչ թէ մարդասիրական զգացմունքից շարժված, այլ անընդհատ իր սեփական օգուտը աչքի առաջ ունելով, ոչ միայն կը քաջալերի իր մօտ աշխատողներին, այլ և կ՝աշխատի նրանց զարգացնել, նրանց աւելի հասկացող և ուրիշն իր համար առաւել պիտանի և արդիւնաւոր գործիք դարձնելու նպատակով։

Եւրոպացին, մանաւանդ օտար երկրի մէջ, աւելի առատաձեռն կը լինի, որովհետև նորա գործի յաջողվիլը կախված է տեղացի մշակների համակրութիւնից։ Նա ուրիշն հաստատ հիմք ստանալու համար ոչինչ չի խնայիլ որ գրաւի դէպի իրան տեղական ազգաբնակութիւնը։

Օտար գումարները մեր երկիրը մտնելով ոչ միայն հասարակ մշակների դրութիւնը կը բարձրացնեն, այլ և նոյն ակնկալութիւններից դրդած կը քաջալերեն այն ամեն աշխատողներին, որոնք ծանօթ են տեղական պայմանների հետ և կարող են նպաստել նրանց գործին, յանձն առնելով առաւել բարձր պաշտօններ և որոնք ծանօթ լինելով գիտութեան հետ, կարող են միշտ մտցնել արդիւնաբերութեան մէջ կատարելագործող և էժանացնող ձևեր։

Ա. Արծրունի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԱԻԹԻՒՆ

ՄԵՐ ՎԻՃԱԿԱՒՈՐ ԲԱՐԵԿԱՐԳԻՉՆԵՐԸ

Մեր քահանայից ցաւալի դրութիւնը իր տգեղ կիրպարանքով տհաճութիւն է գցում ընդհանուրիս վրա։ Քահանայութիւնը, որ մի սրբազան, ուրիշն և մի պատուելի կոչումն է,—պէտք է որ իր շրջապատ հանգամանքներն ևս լինեին բարեյաջող և համապատասխանող իր բարձր նշանակութեանը, որ նա հետզհետէ դէպի կորուստ չը մատներ իր վարկն ու նշանակութիւնը ժողովրդեան առջև և քահանային յաճախակի չը հասցներ յուսահատութեան դռները։ Մանաւանդ անժողովուրդ քահանաներին, որ զառամեալ քահանայից օգնականներ լինելով պարտաւորվում են նոր կա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ՇՆՈՐՀԱԼԻ ԵՒ ՊԱՐԱԳԱՑ ԻՒՐ»

Գրեաց Հ. Ղեւոնդ Մ. Ալիշան։

Ի Վենետիկ 1873 in—12

Մխիթարեանների ուղղութիւնը հայոց լեզուի մշակութեան գործի մէջ յայտնի է ամենքին։—Նրանք ամեն ջանք ու աշխատանք գործ դրին գրաբար լեզուն կենդանացնելու և ներկայում գրաւոր լեզուն դարձնելու։—Այս նպատակով էր, որ մեր անմահ մատենագրների աշխատանքը մինչև անգամ յաւելուածներով հրատարակեցին և մի խօսքով մեր հին գրականութեան մեծ մասի վրա ծաւալած փոշին թափ տուեցին ներկայացնելով ազգային գործը իր հեռաքրքրական անցեալով։

Ընթերցողը, աւելի շոյափելի անելու Մխիթարեանների յիշեալ ուղղութիւնը, կարող է մտաբերել այն գրաբար լեզուով յափշտակված հեղինակներին որոնք, չեմ սխալվի եթէ ասեմ, վերածնեցին մեր գրականական ոսկեայ ու արծաթի դարերը (հինգերորդ ու տասերկուերորդ) յիշեցնելով մեզ Եղիշէ, Եղնիկ, Շնորհալի և շատ ուրիշ սրանց նմաններ։

Մեզանից շատերը չը համակրեցին Մխիթարեանների բռնած, այո, անբնական ուղղութեանը, բայց թէ ինչ արդիւնաւոր հետևանք ունեցաւ (որ գուցէ իրանք — Մխիթարեանք ու չը համակրողներն էլ չէին սպասում) կարող է խոստովանել ամեն առողջադատ անձը։ Բաւական չէր, որ մենք աւելի լաւ կարողացանք ծանօթանալ մեր լեզուի հարստութեանը, մեր անցեալ կեանքին... Եւրոպայի վաղուց արդէն փափաղելի հետաքրքրութիւնն էլ քիչ թէ շատ բաւականութիւն ստացաւ, այս առիթով շատ ուսումնական յօդուածներ հրատարակվեցան և հրատարակվում են, և այս քիչ չէ։ Վաղուց արդէն փափաղելի եմ ասում, պատճառ յունաց և լատինաց հին պատմաբաններ անուշադիր չէին թողել ուրիշ երկրների հետ և Հայաստանը իրանց գրուածներում, այլ ընդհակառակ շատ բաներ են յիշում մեր կեանքի, մեր իշխանութեան վրա։ Տեսէք թէ ինչ է ասում Հուստինոս լատին պատմագիրը... Չը պէտք է լռութեամբ անցնել այնպիսի մի մեծ թագաւորութիւն (հայոց) որի մեծութիւնը Պարթեաց երկրից յետոյ ամենից աւելի է»... կարող էի առաջ բերել էլի ուրիշ պատմաբանների խօսքեր, բայց ձեռքի տակ չունենալով, այս բաւական համարենք, մանաւանդ որ գուցէ առանց այն էլ հեռանում եմ իմ ենթակայից։

Այսպիսի է ահա Մխիթարեանների ուղղութեան արդիւնքը։ Այս ուղղութիւնը պահպանեցին մինչև ներկայ դարուս կէսը, իսկ այն ժամանակից սկսեցին աշխարհաբար լեզուի մշակութիւնը, բայց և չը հրաժարուելով գրաբարից։

Ներկայումս մեր արևմտեան նոր գրաւոր լեզուի մշակողների թւում իրաւամբ Հ. Ղեւոնդ Ալիշանը համարվում է գլխաւորներից մինը, որ յայտնի է զանազան օգտակար աշխատութիւններով։ Վերջիններս Ալիշանի նշանաւոր հեղինակութիւն կարող է համարվիլ յօդուածիս վերնագիր դրած գիրքը, որ բաղկանում է 538 երեսից մի քանի պատկերներով։

Այսպիսի գրքերի հրատարակութիւնը մեծ օգուտ կունենայ մեր գրականական պատմութեան համար, որի իրաւացի կարիքը բարեբաղդաբար մեր մէջ էլ զգացվել է։

Տասերկուերորդ դարում, երբ մեր քաղաքական կեանքը մի հանդչելուն մօտիկ ճրագի նման աղօտ փայլեր էր արձակում, երբ մեր հարևանների հարուածները մշտական բան էին դառել մեզ համար, երբ արևելեան ու արևմտեան ազգերը խառնուելով դրութեան մէջ խաչակրաց պատերազմների պատճառով ոտի տակ էին դրել Կիլիկիան, Հայաստանը, երբ հազար ու մէկ թշուառութիւններ Հայերի վրա էին, մեր եկեղեցին, մեր հոգևորականութիւնը հանդիսանում են պահապան, առաջնորդ մեր կեանքի, մեր ժողովրդի ու մեր գրականութեան։ Մեր եկեղեցին իր հիմնվելու օրից ժողովրդական է... Հայի կեանքը համարեա ամենահին ժամանակներից սկսած մանկական դպրոց տարիներից սովորած էր պատերազմների դաշտին, իշխանների, թագաւորների, աթոռների գերութեան և հարազատների զոհելուն հայրենեաց համար։ Այսպիսի կեանք անցնելով նա չէր վհատում, այլ ոգի առնելով երբեմն այնպիսի զաւակներ էր ընծայում, որ իրանց փոքրիկ, բայց արժանի տեղը բռնելով, գրաւում էին երեւելի ազգերի ուշադրութիւնը։

Տասերկուերորդ դարը, չը նայելով այնքան թշուառութիւններին, հինգերորդ դարուց յետոյ մեր գրականութեան ամենից նշանաւոր ժամանակն է համարվում, որ թէ լեզուով և թէ բովանդակութեան գրուածներով հարուստ է։ Դարուս չորրորդ մատենագիրն է Ներսէս Կլայեցին երկրորդ Պահլաւունի ազգից, որ այնքան հմտութիւն, չնորք ցոյց տալով իր ամբողջ կեանքում Շնորհալի մականունը ստացաւ։

Այս այն Պահլաւունեաց տունն է, որ տասերորդ դարուց մինչև տասերեքերորդ յաջորդաբար ընծայեց մեզ այնքան կաթողիկոսներ, իշխաններ, մատենագրներ—ինչպէս՝ Գրիգոր Մագիստրոս, Գրիգոր Վկայասէր, Գրիգոր Պահլաւունի, Շնորհալի, Լամբրոնացի և այլք։ Հայր Ալիշանը մեծ հմտութեամբ կազմել է և դցել յիշեալ գրքի հետ մի ցեղացոյց պատկեր (ծառ) այս երկրորդ Պահլաւունի տոհմի, որ արմատ բռնելով Արտակ Պահլաւունուց ինչպէս մի ծառ աճել է ժառանգներով։

Գրիգոր Մագիստրոսի դստեր Ապերատ որդդ զաւակը և Գրիգորիս կաթողիկոսի կրտսեր եղբայրն էր Շնորհալին, այս ածականին բոլորովին արժանի անձը, որ ծնուեցաւ 1102-ին Մարաշու կողմերում Ցով կոչուած մի բերդի մէջ։ Մանկութեան հասակից յանձնվեցաւ Շնորհալին այն նշանաւոր կաթողիկոս-մատենագրի խնամքին, որին մի ժամանակ Բիւզանդիայի կայսրը պատուելով դուքս անունն էր շնորհել։ Իսկ յետոյ գրականական ասպարէզի մէջ աշխատելով սրբոց վկայաբանութիւնները թէ թարգմանեց և թէ թարգմանել տուեց ու կարգի բերեց, որի պատճառով կոչվում է Վկայասէր։ Չէ անցնում շատ ժամանակ պատանի Շնորհալին ցանկանում է գնալ նոյն ժամանակի նշանաւոր Կարմիր վանքը ուսումը աւելի կատարելագործելու համար։ Այս վանքը գտնվում էր Տաւրոս ընդարձակ լեռների Սեաւ լերինք կոչուած մի ճիւղի վրա, ուր ուրիշ քրիստոնեայ ազգերի հետ հայերն էլ շինել էին վանքեր, պարապելով ուսումը ու աղօթքով։ Հայերի վանքերի մէջ Կարմիր վանքը գառել էր ուսման կենդրոն, ուր յաճախում էին երիտասարդներ ու մինչև անգամ վարդապետ-աբեղաներ, բանասէրներ, լսելու նոյն վանքի առաջնորդ Ստեփանոս Կարմիր Վանեցու կամ Գիտնականի (ինչպէս անուանում են իր ժամանակակիցները) դասերը ու քարոզները։ Ինչ կարող էին լինել այսպիսի վանքերի ուսմունքը, եթէ ոչ Սուրբ գիրքը ու հայրերի գրուածները։ Սակայն Շնորհալին, փոքր հասակից արդէն ընդունակութիւն ունենալով, Ստեփանոսի մօտ էլ յառաջադիմութիւն է անում և շատերի ուշադրութիւնը գրաւում է։ Այս ժամանակներս Գրիգորիս Պահլաւունին, Շնորհալու անդրանիկ եղբայրը, յաջորդել էր Բարսեղ կաթողիկոսին, ուստի ուսման ընթացքը վերջացրած, Շնորհալին գնում է իր եղբօր մօտ և քիչ ժամանակում քահանայ է ձեռնադրվում նրանից։ Այնուհետև Շնորհալին գտնուելով իր եղբօր մօտ լաւ կարողանում է ծանօթանալ հայրապետական իշխանութեանը։ Եղբօր աչքը նրա վրա է դառնում և շուտով եպիսկոպոս է ձեռնադրվում Շնորհալին։ Մենակ մեր քաղաքական աթոռը չէր, որ տարուբերվում էր Հայաստանի, Կիլիկիայի մի ծայրից դէպի միւսը, հայրապետական աթոռն էլ էր թափառում և ինչ տեղ ասես չը գաղթեց բարբարոս պատերազմներից սարսափած։ Գրիգոր կաթողիկոսն էլ աւելի լաւ ապահովելու իր աթոռը Դղեակ անուանեալ լեռնից տեղափոխեց ոչ հեռու—Հռոմկլայ. այստեղ ահա Շնորհալին արժանացաւ եպիսկոպոսական աստիճանին իր եղբօր ձեռքով։

Այնուհետև Շնորհալին ներկայանում է երկրորդ անձը կաթողիկոսից յետոյ. օգնում է եղբօրը հայրապետական գործերի մէջ և նրա կողմից թղթեր է գրում զանազան իշխիրների մասին։ Կրօնական հարցերի առիթով ճանապարհորդութիւններ է անում ու շուտով անուն է հանում Ասորոց,

նոնով նոցա մուաքի երեք մասը իրանց հասցնել, իսկ չորրորդովը իրանք կառավարուել,— որ դժուար է և ամբողջովը։

Բայց մի ցաւալի և մի յաճախ կրկնուող իրողութիւն է այս մեր մէջ, որ քահանայութիւնը շատ անգամ „զէմլէն-կիկօնների“ պաշտպարուելու տաղաւար է դառնում։

Սորա պատճառը յայտնի է մեզ, որին դիմաւարանում ենք մի սպիղանի դանելու,— այդ քահանաների մենդեան նուաստ ազգիներն են։ Եւ ահա այս ապրուստ ձեռք բերելու նուաստ միջոցները, որ ստիպում են քահանային շաբաթներով զրկուած լինել իր անհրաժեշտ պիտոյքներից անգամ և իր կոչմանը անվայել կերպով վարվել, մեր վիճակաւոր գործակատարների մեծի մասի համար կորբատաբեր հետեւանքներ են ունենում։ Միշտ պաշտօնը առաւել նուազեցնում է քահանայի մուաքը, նորա պաշտօնական գործերով իր քաղաքից յաճախակի բացակայութեանց պատճառով, որի սնունդի մեծ մասը նորա ծուխ հովուող քահանան է վայելում։ Թողնենք այն, որ նա շատ անգամ ևս ստիպուած է, իրանից անկախ պատճառներից, հիւրընկալ լինել։

Ահա այս անխուսափելի հանգամանքները, որոնցով և շրջապատուած է քահանայ-գործակատարը, ստիպում են նրան այլ և այլ պատճառներով շատ ճշմարտութիւններ թաքցնելու։

Որքան ուրեմն ջան դնելու է վիճակաւոր գործակատարների համար ռոճիկ սահմանելը, որով գործը առաւել ճիշդ ուղղութիւն կը ստանար և այս պաշտօնի մէջ կը հաստատուէին առաւել բարեխիղճ անձինք, այն պաշտօնի, որից այժմ շատերը ակամայ խորշում են։

Ս. Ընթռն ևս, այն ժամանակ կունենար սրանով առաւել արդասաւորութիւն։

Կ.

ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՅԵՐԸ ԵՒ ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

—

Աստրախանի „Астрах. Справочн. Листокъ“ լրագրում կարդում ենք հետեւեալը։ Քաղաքիս արտօնացած հայ-հասարակութեան պատգամաւորը խնդիրքով դիմեց ներքին գործերի մինիստրին, խնդրելով որ յունվարի 1-ին 1874 թ. Խարձրագոյն հաստատված հրամանը ընդհանուր զինուորագրութեան մասին չը տարածվի Աստրախանի հայոց վրա։ Այդ խնդիրքի գլխաւոր հիմունքը այս էր՝ ա) որ հայերը, տէրութեան հրաւէրքով զետեղվելով Աստրախանի մէջ 1799 թուին, համաձայն նոյն թուի հոկտեմբերի 28-ին շնորհված հրովարտակին, ազատված էին մինչև այժմ բոլոր հարկաւորութիւններից, նոցա թւում և զինուորական պարտաւորութիւնից, բ) որ յունվարի 1-ին ներկայ թուի հրատարակված հրամանի զօրութեամբ, մինչև այժմ ամեն հարկաւորութիւնից (թէ բնութեամբ, թէ զինուորագրութեամբ, թէ փողով) ազատ մնացած այլազգիները Աստրախանի նահագի, որոնց թուին հաշուում են իրանց և հայերը, ազատված են նոյն հարկաւորութիւնից և նոր կանոնադրութեամբ։

Ներքին գործերի պ. մինիստրը, խորհրդակցութեամբ զինուորական մինիստրի հետ, ճանաչից յիշեալ խնդիրքը անիրագործելի հեւեւեալ պատճառներով։ Առաջվայ զինուորական կանոնադրութեան ժամանակ, ոչ թէ միայն հայերը ազատված էին զինուորական ծառայութիւնից համաձայն հրովարտակների և հրամանների, բայց և այլ ազգութիւններ, դասակարգեր և հասարակութիւններ։ Իսկ զինուորագրութեան նոր կանոնադրութեան մտցնելովը, բոլոր շնորհված արտօնութիւնները, այլ ևս կարող չեն շարունակվել և բոլոր անձինք, ազգութիւններ և դասեր, որք մինչև այժմ ազատ էին զինուորական պարտաւորութիւնից, պարտաւոր են ուրիշների հետ հաւասարապէս կատարել զինուորական ծառայութիւնը, օրէնքի ընդհանուր հիման վրա, որովհետև նոր կանոնադրութեան գլխաւոր առանձնութիւնը իսկ նրա վրա է կայանում, որ այդ նոր օրէնքը չէ թոյլ տալիս ոչ օրի համար մշտական բացառութիւն զինուորական ծառայութեան պարտաւորութիւնից։ Իսկ եթէ յունվարի 1-ին ներկայ թուի Խարձրագոյն հաստատված և Սենատին տուած հրամանի մէջ յիշված են քանի մի արտօնութիւններ ընդհանուր զինուորագրութիւնից, այդ արտօնութիւններից ոչ մինը մշտական չէ և բոլորն էլ ունին ժամանակաւոր արտօնութիւնների նշանակութիւնը։ Բացի սրանից Աստրախանի հայոց հասարակութեան կողմից իրան այլազգիների թուի մէջ համարելը, բոլորովին անճիշդ է, որովհետև զինուորական կանոնադրութեամբ այլազգիների թուին հաշուում են այն ցեղերը, որք հասած են քաղաքական զարգացման ստոր աստիճանին։ Իսկ Ռուսաց պետութեան մէջ բնակվող ցեղերը, ինչպէս հայերը, յոյները և այլն, այլազգի անուն չեն կրում։

ՆԱՄԱԿ ՋԵՐԲԱՑԻԼԻՑ

—

Ինչպէս յայտնի է աշնան սկիզբը տարվայ ամենալաւ եղանակ է։ Մեզ մօտ, Վառանդի գաւառակի մէջ ամարային տաքութեան նուազվելը և անցնելը դէպի հովութիւնը կազմում է նոյնպէս մի շատ հաճելի երևոյթ, նա մանաւանդ, որ երեւած անձրևները նպաստում են առաջիկայ ցանքերին։ Այս տարին Ղարաբաղում շատ առատ չէ կարող անուանվել։ Վաղումի երաշտութիւն Շուշու գաւառի ամբողջ հարաւային մասում, չափազանց վաղ չորացրեց արտերը և այսպիսով յառաջ բերեց մի զգալի պակասութիւն ոչ միայն երկրագործական բերքերի այլ և արօտի, որ անհրաժեշտ է թէ հաստատաբնակների, թէ թափառական ազգաբնակութեան հօտերի համար։

Շուշվայ գաւառի անտառների ամեն տարի կրկնվող ոչընչացնելը մեկնում է կլիմայական պայմանների այնպիսի ակներև փոփոխութիւնը։—Խոնաւութիւնը որպէս բնութեան արդիւնաբերող ոյժերի գլխաւոր գործիչը անտառազուրկ տեղերում պահպանվում է նոր անտառների զարգացնելով և թանկ է գնահատվում ժողովրդից, որ նորա օգուտը հասկանում է։ Բայց մեզ մօտ,—էլ չը խօսենք նոր անտառներ զարգացնելու վերա—եղած անտառների պահպանելու հարցը զարգացման ամենատոր աստիճանի վերա է կանգնած։ Անտառը ոչընչացվում է կամ կարվում է ամենաանողորմ կերպով։ Ընթերցողը չի հաւատայ, եթէ ասեմ, որ մի տարվայ միջոցում ամբողջ անտառներ մերկ արաերի են դարձվում։ Անտառների վերա հսկելու համար օրէնքից նշանակած անձինք, ըստ երևոյթի, չեն հետաքրքրվում այդ հարցով և սրանով իրանց կողմից արդարացնում են և աւելի խոր արմատացնում են վաղվայ ժամանակներից ժողովրդի հասկացողութեան մէջ եղած կարծիքը, որ անտառը կալուածատէրի մասնաւոր սեփականութիւն է։ Շատ ցանկալի կը լինէր, եթէ վարչութիւնը մանաւանդ մեզ մօտ կարգադրէր անտառապահներին առաւել ծանր նայել իրանց պարտաւորութեան վերա, որ ժողովուրդը փոքր ի շատէ ընդհանար անտառներով կանոնաւոր կերպով վայելելու։

Աւելորդ է ասել, որ այստեղի արդիւնաբեր գետինը կորցրածը աւելորդով կը վարձատրէր, եթէ տեղական ազգաբնակութիւնը կը հրաժարվէր այսպիսի անխնայ և անողորմ ոչընչացնելուց։

Մեր կողմերի առանձնակարգ երևոյթների թւումը անկասկած չը պիտք է յիշվեն բացարձակ յարձակմունքներ ամբողջ խումբերով վաչքատուն կամ հաստատ բնակութիւնների վերա — դրանք ամենահասարակ երևոյթներ են։

Պատմում են մի նոր անցք որ մաքսական վերադիտողների և 40-ի չափ աւազակների մէջ է պատահել։

Դրանք, ինչպէս ասում են մասամբ Ռուսաստանի հետ սահմանակից պարսից Ալմուրադ խանի մարդիկ են, մասամբ պատկանում են Մարգանլը անուանված հասարակութեանը։ Մի ակնատես պատմում է որ նրա Ալմուրադ խանի մօտ եղած ժամանակը նա տեսել է երկու ծանր վիրաւորածներին անկողինների մէջ պարկած, որոնք վերադարձել էին այս անցքից։ Տեղական վարչութիւնը, թէև երբեմն միջոցներ է գործ դնում այս վնասը արմատախիլ առնելու համար, այնու ամենայնիւ նորա օգնութիւնը բաւականացուցիչ չէ մեր ռուս-պարսկական կօրդօնի դէմ այժմեան դրութեանը նայելով։ Կօզակները, որոնք պահպանում են կօրդօնի դիծը չափազանց թոյլ են, որ կարողանան կատարել նրանց յանձնած պաշտօնը։ Նրանց անընդունակ լինելը այս ծառայութեան համար ակներև է անդադար կրկնվող անցքերից։

Աւազակները խումբերով անց են կենում կայացրուեալ դրութիւնը արգելում էր նրան ամեն տեղ գնալ այցելութիւն իր նպատակները քարոզելու համար։ Մի միջոց դաւ, այն է Ընդհանրականը, ինչպէս վերևում յիշեցի, որ մի տեսակ շրջաբերական է։ Այս Ընդհանրականի մէջ առաջ խօսքը կրօնաւորներին է ուղղում, անուանելով նրանց խաւարի լուսաւորիչներ, ինչպէս երկնքի ասողները, յետոյ կարգով դիմում է իշխաններին, քաղաքականներին, զինուորներին, երկրագործներին և կանանց։ Այսպէս Շնորհալին ժողովրդի ամեն դասակարգին յիշեցնում է իր ատիճանը, իրաւունքը և պարտաւորութիւնները։ Ընդհանրականը լի է կրօնական եռանդով, որ լաւ դիտէ Շնորհալին ձուլել առօրեայ կենսական խնդիրների հետ։ Շնորհալու լեզուն դիւրահասկանալի է և մի և նոյն ժամանակ հայկաբանութեան օրինակ է համարվում։

Առ հասարակ Շնորհալին ներկայանում է պաշտպան հայ-ժողովրդի և մանաւանդ ցանկանում է սորին դասակարգերի բարելաւութիւնը, այս պատճառով շատ անգամ յանդիմանում է քաղցր ոճով այն մարդոց և իշխաններին, որոնք վատ էին վարվում նրանց հետ։ Շնորհալու թղթերը, շրջաբերականները այն ազդեցութիւնն էին թողել Հայերի վրա, որ շատ կաթողիկոսներ, եթէ կամենում էին խրատել կամ համոզել ժողովրդին արտադրում էին և ցրում նրանց ժողովրդի մէջ։

Յոյները և լատինացիքն էլ չէին բաւականանում մեր քաղաքական ակար դրութիւնը տեսնելով։ Մեր եկեղեցին այն միակ որոշ սեփականութիւնը ևս նրանց աչքերում փուչ էր երևում։ Դեռ Գրիգոր կաթողիկոսի կենդանութեան ժամանակ Յոյների խորամանկութիւնները կրօնական միութեան վերաբերութեամբ անպակաս էին։ Այս անցքերը Շնորհալուն անծանօթ չէին, որ ինչպէս վերև յիշեցի, իր եղբօր կողմից թղթերը գրեց յունաց Մանուէլ կայսեր, գրաւելով սրա ուշադրութիւնն էլ իր ճոխ գրչով։ Այն ժամանակ յունաց կայսեր փեսան Կոմնինեան Ալեքս իշխանը եկաւ Կիլիկիա և երկար խօսակցութիւն ունենալով Ներսէսի հետ խնդրեց շարունակել իր թղթերը։ Այսպէս այն ժամանակից սկսվելով Ներսէսի կաթողիկոսութեան օրովն էլ շարունակվում են բաղնացութիւնները յիշեալ միութեան մասին։ Շնորհալին ինչպէս առաջ այժմ էլ պատասխանում է իր թղթերով, որոնք բոլորը միասին կոչվում են «Պատճառ խնդրոյ միաբանութեան»։ Այս գեղեցիկ թղթերի մէջ միանգամայն յաջողակ կերպով առաջարկում է միութիւնը և սէրը երկու ազգերի մէջ աւելի խաղաղութեամբ քան թէ կրօնական վէճերով։ Յետոյ անցնում է հայոց դաւանութեան և այն ծէսերի մեկնութեանը, որոնց մասին Յոյները ծուռը հասկացողութիւն ունէին։ Այս թղթերը ուղղած են կայսեր։ Սրանով չէ բաւականանում Շնորհալին, առանձին թուղթ է գրում Մէքայել յունաց պատրիարքին, որպէս կրօնական գլխաւորին։ Պէտք է ասել, որ Շնորհալին էլ նրանցից—կայսրից և պատրիարքից ստանում էր թղթեր, որոնք թարգմանված և հրատարակված են Շնորհալու թղթերի հետ։

Կրօնական միութեան խնդիրը Շնորհալին մենակ չէր կամենում վճռել, բոլոր հայոց հոգևորականների համաձայնութիւնը, որ կարող եմ ասել այն ժամանակի ժողովրդի ձայնն էր, ցանկանում էր իմանալ։ Ուստի նրանց ևս է դիմում Շնորհալին և խնդրում է որ միաբան քննեն յունաց առաջարկած միութեան խնդիրը և յայտնեն իրանց ցանկութիւնը։ Բայց յառաջ քան թէ կը ստանար այն ընդհանրական ձայնը վախճանեցաւ մեր ժիր աշխատողը (1172-ին), որով և միութեան խնդիրը մնաց անկատար....

Շնորհալին մենակ կաթողիկոսական պաշտօնով չէր բաւականանում. նա հանդիսանում էր քաղաքական գործերի մէջ հաշտիչ, խաղաղարար։ Մինչև անգամ մասնաւոր անձանց դիմում էր օգնելու թէ խօսքով թէ գրչով։ Միիթարում էր վտանգեալներին վնասուածներին, համոզում էր անջատեալներին։ Եւ ում ասես չը միիթարեց. շատ վարդապետներ եթէ մի տարակոյս ունէին մանաւանդ գրաւոր, նա պատրաստ էր փարատել այդ տարակոյս իր սիրուն գրչով։ Նա գրքերի մեկնիչ էր, նա բանաստեղծ էր—եղիսիոյ ողբը այսօր էլ մեզ վրա մեծ տպաւորութիւն է ունենում յիշեցնելով նոյն քաղաքի կործանելը, բնակիչների կոտորածը, աւարը գաղան Ջանղի ամիրայի ձեռքով։ Մեր եկեղեցին շատ կարգադրութիւններ ստացաւ նրա ձեռքով։ Եւ այսօր այն շարականները, երգերը ու աղօթքները որ հնչեցնում է հայոց եկեղեցին մեծ մասը նրա աշխատութիւնք են։ Տարածվում էր միանգամայն նրա անունը ամեն կողմը, Բիւզանդիայ, Աստրեստան, Պարսկաստան, երևելի մարդիկ գալիս էին նրան տեսնելու։ Թագաւորներ, կայսրներ հրաւիրում էին նրան։

Հայերը իրանց սովորութեամբ կամենում էին մի մականուն տալ նրա գործքերի և աշխատանքի համեմատ, որով այս Ներսէսը պիտի որոշուէր ուրիշ Ներսէսներից, և ահա պակեցին նրան Շնորհալի (շնորքով լի) անունով։

Սուտ են, սուտ այն պարոնների խօսքերը թէ քառասուն դար ապրելով ոչինչ չենք արել։ Մենք էլ ունեցանք մարդիկ, թէ հոգևորական, թէ աշխարհական, որք արժանի են յիշվելու ընդհանուր մարդկութեան պատմութեան մէջ։

Թող ներում ինձ նկատել, որ Հ. Ալիշանը այն եկեղեցական անցքերին, որք լինում էին Հայերի և Լատինացիների մէջ աւելի կաթոլիկութեան քան թէ հայութեան կէտից է նայում։ Բայց այն բանը, որ ամենից առաջ աչք է ընկնում ընթերցողին այս գրքում, Ալիշանի հետեւեալ խօսքերն են...«Կրօնական խնդիրները եթէ գտուին, թողով ի դատաստան բարձրագոյն ատենի (Պապին ?) որում եմք և կուզեմք միշտ ըլլալ հպատակ...» (ափսոս)։ Այնու ամենայնիւ Հ. Ալիշանի այս աշխատութիւնը շատ հետաքրքիր է և մանրամասնաբար պարունակում է իր մէջ թէ քաղաքական, թէ գրականական և թէ եկեղեցական պատմութիւն ընդհանուր Հայաստանի Ներսէս Շնորհալու ժամանակի։ Սրանով մեծ արժէք պիտի ունենայ այս գիրքը մեր բանասէրների առաջ, որոնց թողնում ենք աւելի մանրամասն քննադատութիւններ։

Փարիզ։ 74. սեպտ. 4. Յարոյ։

Ծան։ Ընդհանրականը թարգմանած է լատիներէն։ Իսկ աքանչելի Հաւատով խոստովանիմ, աղօթքը մօտ 30 լեզուով։

բանների մէջ տեղ, որոնք իրարուց 8—10 վերստ հեռաւորութեամբ են։ Մաքսատան պաշտօնեաները սակաւաթիւ լինելով չեն կարող միանգամայն թէ կօրդօնը պաշտպանել թէ ոստիկանութեան պաշտօնը վարել։

Ժամանակը պահանջում է, որ սահմանի պաշտպանութեան համար եղած կօրդօնի պահպանութեան այժմեան կարգը մի վերաքննութեան ենթարկվէր։

Սեպտ. 10-ին Ն. Կ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Երբ Շամախուց երկու ստանցիա հեռանում ես, չես պատահում մի որ և իցէ ծառի և կանաչի։ Այդ ահագին դաշտերը, որոնք գտնվում են Շամախւոյ և Բաղուի մէջտեղում, անջուր են։ Ձմեռը չափազանց ցրտեր լինում են Բաղուայ ճանապարհներում, մանաւանդ «Գլիջան» այնպէս որ ճանապարհորդներից շատերը (ինչպէս որ շատ անգամ ձմեռը պատահում է) սառչում են ու մեռնում։ Ամառուայ ամենասաստիկ քամիներ են փչում հիւսիսային կողմից։ Ստանցիաները լինում են առ հասարակ անմաքուր սաստիկ քամիներից մանր աւազ և փոշի բարձրանալուց։ Ամեն տեղ ստանցիայում չես գտնիլ պատրաստի ուտելիքներ։ Ջուրը բերում են շատ հեռու տեղերից սայլերով։ Ջրերը լինում են անմաքուր, աղի և ապականված, այնպէս որ ճանապարհորդները չեն կարողանում խմել։

Շամախուց մինչև Բաղու վեց ստանցիաներ կան — Աջիդարայ, Մարաղայ (նաև մալականի գիւղ), Շամշադին, Ջեանզի, Նահլադամայ և Արբաթ։

Հասնում ես Բաղու։

Բաղուն, որ գրեթէ Անդրկովկասի նշանաւոր քաղաքներից երկրորդը կարող է համարվիլ զբաղեցնում է Կասպից ծովու Ավշօրանեան թերակղզու արևմտահարաւային կողմում, ծովի ափին, և բաժանվում է չորս մասը.—Բերդ, Կարանդին, Դուրսի քաղաք (форштадтъ) և Պօրա, որը ասվում է և Բայիլովի հրուանդան (мысъ)։ Քաղաքի արևելա-հիւսիսային մասում տարածված է մի ընդարձակ դաշտավայր, իսկ արևմտա-հիւսիսային մասում—բաւականի բարձր բլուրներ։ Բերդը հին քաղաք է, սա հին ժամանակներից Պարսից բնակչութեան տակ է եղել։ Նա շինուած է մի քանի բլուրների վրա, համարեա թէ բոլոր տները խառնուած են իրար հետ նեղ նեղ փողոցներով, և տեղի դիրքն էլ բարձրաւանդակ։ Այստեղի տները ըստ մեծի մասին երկու կամ երեք յարկեայ են և բոլորովին պարսկական հին ձևերով են շինած։ Այստեղ փողոցները շատ նեղ են, ծուռ և ցեխոտ, սաստիկ անձրևից յետոյ ողմային լճեր են ձևացնում։ Կան նմանապէս այնպիսի փողոցներ, որ եթէ մէկ մարդ կանգնի այդ փողոցի մէջտեղում և երկու ձեռները տարածի՝ մէկը մի պատին և մէկն էլ միւս պատին կհասանեն։ Գեղեցիկ են ծովի ափում գտնուած շինութիւնները, որ համարվում է բերդի ներսի կողմը։

Բերդումը պատմական են և նշանաւոր Խանի տները, քաղաքի բերդը և աղջկայ աշտարակը *)։ Այս քաղաքը (բերդը) բոլորովին Ռուսին պատկանելուց յետոյ յիշեալ Խանի տները շինել են վառօդի, թնդանօթների և գնտակների ամբարանոցներ։ Ամուր պարիսպներով սա պատած է և պարիսպների չորս կողմից թշնամու հետ կռիւ տալու տեղեր ու ծակեր են շինած։ Պարսպի մէջ գտանվում է Խանի մզկիթը—աղօթատեղին, բաղանիքը, հարէմխանա, տեղ տեղ քանդակներով և նկարներով բանտ, դաղանատուն և այլն։ Գետնի տակը ճանապարհ կայ այս աներից փախչելու մինչև քաղաքի դուրսը։ Ճանապարհը դէպի Պարսկաստանի կողմն է շինած, որ է դէպի արևմտահարաւային։ Այդ մեծ ճանապարհը փակուած է արդէն։ Իսկ հետաքրքրական է միւս նեղ ճանապարհը գետնի տակով, որ դուրս փորած է դատաստանատեղի մէջ տեղում աւազանման։ Այդ տեղով բերելիս են եղել բանտարկեալներին մէկ մէկ, որովհետև ինչպէս ճանապարհը նոյնպէս և աւազանը նեղ է, որի մէջ կանգնելով, յանցաւորը միայն գլուխն է երևացել։ Ոմանք պատմում են որ եթէ յանցաւորը մահապարտ է եղել, այն աւազանի մէջ կտրուել է դահճի ձեռքով նրա գլուխը, և մարմինը քաշքաշելով տարել են յետ բերած ճանապարհովը, իսկ եթէ արդարացել է, դուրս են հանել դատաստանական փոսից և արձակել են խանի դարպասից։ Առանց հրամանի և առանց պ. Սիլիկովի (արտիլերիայի ատիճանաւոր) ներկայութեան անկարելի է մտնել պարսպից ներս խանի տները տեսնելու, և ամեն մարդի թոյլ չեն տալ եթէ պատուելի և նշանաւոր անձն չէ։

Կարանտինը գտնվում է Բաղուի արևելահիւսիսային կողմում։ Այստեղի փողոցները թէպէտ աւելի լայն են և կանոնաւոր, բայց շատ կեղտոտ են լինում և անմաքուր, մանաւանդ ամառ ժամանակ զարշելի հոտեր են փչում և բնակիչներին ենթարկում են զանազան հիւանդութեանց, այն է—թոքախտութեան և արեան սակաւութեան։ Սրանից է, որ ամառը շատ ժամանակ խոլերա է պատահում և իւր գործունէութիւնը սկսում հէնց այստեղից։ Քաղաքի բերդից դուրս չինութիւնները, որ խառնուած է բերդի հետ և սրի հիմնարկութիւնը 9—10 տարի է, շատ յարմար տեղ է շինած և կարելի է ամենապատուական տեղը համարել Բաղուի միւս մասերից իւր օդովը, ջրովը, լաւ շինուածքներովը, լայն, մաքուր և կանոնաւոր փողոցներովը։ Դուրսի քաղաքի գլխաւոր շինութիւններից մէկը կարելի է համարել Սբ. Գրիգոր Լուսաւորիչ հոյակապ նոր եկեղեցին, որը կառուցած է սրբատաշ քարից և որը գտանվում է գիմնազիայի դէմռադէմ։ Նշանաւոր է նմանապէս և նրա դաւթում կառուցած Մարգասիրական ընկերութեան հոյակապ տները, ուր գտեղուած են Հայոց երկսեռ դպրոցները, զրադարանը, խորհրդարանը և տպարանը։

Բաղուայ եկեղեցիքը ընդ ամենը վեց են, որոց թուում երկուսը հայոց է, իսկ չորսը ռուսաց։ Հայոց եկեղեցիներից մէկը, նորը գտնվում է դուրսի քաղաքում մի հրապարակի մօտ, իսկ միւսը հինը—բերդում։ Ռուսացը նմանապէս երկուսը բերդումն է, մէկը դուրսի քաղաքում և մէկն էլ Պօրտում (բայիլով հրուանդան)։ Այս ռուսաց եկեղեցիներից երկուսում շատ վաղուց է, որ ժամերգութիւն չէ լինում, որովհետև նոքա փակուած են և միշտ մի պահապան գլխաւոր է կանգնում դռան առջև։ Բաղուի մզկիթները շատ շատ են, որովհետև այստեղ պարսիկներ շատ են բնակվում։ Քաղաքը ունի երեք գեղեցիկ ճեմելիք—բուլվար և մի ընդարձակ հրապարակ։ Ամենագլխաւորը բերդի ներսումն է գտնվում ծովի ափում, որ Միխայիլովսկի պարտէզ է ասվում։ Իսկ երկուսը և հրապարակը բերդից դուրս քաղաքում։

Բաղուի չորրորդ մասը—Պօրան է։ Սա վերտից փոքր ինչ հեռու է քաղաքից։ Պօրտում բնակվում են միայն ծովային զօրքերը (матросы) և իրանց մեծաւորները։ Քաղաքացիներին արգելուած է այստեղ տուն շինելը։ Պօրտի օդը աւելի առողջարար է, քան թէ քաղաքինը, որովհետև այստեղի դիրքը բարձրաւանդակ է։ Խմելու ջուրը քաղաքից են բերում սայլերով։ Այստեղի տները բոլորը արքունական են, բացի մի քանիսից որոնց կառուցել են ռուս մեծաւորները։ Տները երկու կամ երեք յարկեայ են և բոլորը սրբատաշ քարով, իսկ փողոցները շատ լայն և մաքուր։ Այստեղ կայ մի մեծ գործարան, որտեղ պատրաստում են նաւթի կաթսաներ և չոգենաւերի համար հարկաւոր ուրիշ նիւթեր։ Կայ նաև մի նոր կառուցած տակառի գործարան, որտեղ տակառ են շինում և տախտակները մաշինայով կոտրատում։ Գործարանապետը ռուս է իսկ արհեստաւորները գաղղիացիք և գերմանացիք։ Այստեղ կայ և մի հոյակապ և սրբատաշ քարով կառուցած եկեղեցի, որը քաղաքի բոլոր եկեղեցիներից դերազանցում է իրա գեղեցկութեամբը։ Արժանի է ուշադրութեան նաև նրա հինգ կամարուղիկէն իւր ճարտարագործութեամբը։ Այս եկեղեցու մեծ դաւթում տօների ժամանակ զինուորական հանդէսներ են լինում։ Բաղուայ փողոցները մինչև հիմայ անուններ չունէին, բայց մինչև Փոխարքայի գալուստը մի շաբաթ առաջ բոլոր փողոցներին որոշ որոշ անուններ տուին։

Ա. Գալստեանց

*) Աղջկայ աշտարակի մասին պ. Աղ. Բալանթարեանցը իւր նամակներով արդէն մանրամասն տեղեկութիւններ յայտնած է, միայն այս կարող եմ ասել, որ այս աշտարակը ևս պատկանելի է եղել խանի աղջկան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նորին Բարձրութիւն Կովկասեան Փոխարքան սեպտեմբերի 28-ին հասաւ Թիֆլիս, Բորժոմից գալով։

***

Բժիշկ Ա. Բարայեանը Կովկասեան բժշկական ընկերութեան վերջին նստերից մինի մէջ առաջարկութիւն արաւ որ ընկերութիւնը յանձն առնէ հրատարակել բժշկական—ժողովրդական մի թերթ (Народно-врачебный листокъ)։ Ցայսմանէ չէ մինչ լեզվով կը հրատարակվի թերթը։ Պ. Բարայեանը յայտնել է մի և նոյն ժամանակ որ եթէ նրա յանձն առած վրացերէն և հայերէն բրօշիւրաները աջողվելու չեն, այն ժամանակ նա կը նուիրէ այդ բրօշիւրաների համար տուած գումարը նոր հիմնվող ժողովրդական-բժշկական թերթի հրատարակութեանը։

***

„Тифлисск. Вѣстн. լրագիրը արտատպել է անգլիական „Times“ լրագրից մի շատ հետաքրքիր դատաստանական գործ։ Լօնդօնի այն երևելի ընկերութիւնը, որ անցեալ տարի քիչ էր մնում վերցնում էր Թիֆլիսում ջրանցքի և գազի գործը, այս օրերս ստիպուեցաւ ներկայանալ լօնդօնեան դատարանի առաջ։ Ընկերութեան անդամները մեղադրվում են խարեբայութեան և գողութեան մէջ։ Նրանք մի ձեռնարկութիւն յանձն առնելով, հրատարակել են և ծախել են ակցիաները, իսկ դումարը կերել են ու ձեռնարկութիւնը չեն իրագործել։ Եւ այդ ընկերութիւնը շնորհով մեր քաղաքային վարչութեան միամիտ ձայնաւորների և զանազան Բուկօների պրոպ մեզանումն էլ գործ սկսէր... Բայց մեր դարում, փառք աստուծու, հեռագիր կայ թէ լօնդօն և թէ Փարիզ... և Թիֆլիսումն էլ լրագրութիւնը միջոց ունեցաւ մերկացնել խարեբայութիւնը...

***

Սեպտեմբերի 21-ին ներկայ Թիֆլիսում կրկին բացվեցաւ իտալական օպերա։ Առաջին անգամ ներկայացրին «Դիմակաւոր պարահանդէս» անուանված Վէրդիի օպերա։

***

Մեզ հաղորդում են, որ Պօղոս վարդապետ Տէր Մարգարեանց և Յարութիւն քահանայ Դիլիջանի մէջ մի ուսումնարան հիմնել են կամենում, բայց հոգաբարձուները չեն տալիս ուսումնարանի փողը, այլ իրանց կրպակներում իրանք բանեցնում են։

***

Պ. Բ. Տէր Սահակեանը գրում է մեզ Շամախուց՝ վերջին սաստիկ երկրաշարժից յետոյ, որ եղած էր 16-ին յունվարի 1872 թվի, քաղաքիս երեք մասերի բնակիչները, Բաղուայ նահանգապետի հրամանին հետևելով, գաղթել էին քաղաքից մի վերստաչափ հեռու դէպի արևմուտք, սառնալով հողեր և իւրաքանչիւր հոգատէր 100 ռուբլ այն գումարից, որ ժողովված էր Ռուսաստանում նուիրատուութեամբ։ Այս հողերը բաժանելու համար հիմնվեցաւ մէկ տնաչէն մասնաժողով (строительная коммисія) որ 226 կտոր հող բաժանեց հայերին և թաթարներին։ Շատերը բաւական չը համարելով 100 ռուբլ մի տուն շինելու համար իրանց ձեռքին եղած բոլոր պատրաստի փողն էլ այդ գործին էին նուիրում։ Այժմ գրեթէ բոլոր հայերը զետեղվեցան Նոր Շամախումը, իսկ թաթարները թէպէտ նմանապէս նոր քաղաքում շինութիւններ ունեն, բայց կրկին սկսեցին վերադառնալ իրանց հին բնակարանները։ Նորերումս եկաւ Շամախի գլխաւոր ճարտարապետ նոր շինութիւնները զննելու համար։

***

Սեպտեմբերի 28-ին եղած արեդակի խաւարումն սկսվեցաւ 12 ժամից անց 51 րոպէին և վերջացաւ 3 ժամից անց 49 րոպէին։

***

Բարոն Նիկոլայիի բացակայութեամբ, ստատսէկրետար, սենատոր իշխ. Մուսինա-Պուշկին նշանակվեցաւ պաշտօնակատար կառավարչի Կովկասեան Փոխարքայի գլխաւոր կառավարութեան։

***

Նոր Նախիջևանից գրում են մեր լրագրին. Նախիջևանում բացուող վիճակային դպրոցի հոգաբարձութիւնը յանձնեց Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեանցին գնալ Թէոդոսիա խալիպեան ուսումնարանի շարժական կահկարասիքը ածրդով ծախելու և տպարանական մեքենայքը Նախիջևան բերելու։ Գրիգոր սրբազանը ամսոյ մի չափ Թէոդոսիա մնալով, ինչպէս կը լսվի, բոլոր շարժական կայից գումարը հասցրել է 3000 ռուբլի։ Իսկ տպարանը սեպտեմբերիս 4-ին հասել է Նախիջևան և յոյս կայ շուտով ընդ տեսչութեամբ «Դաստիարակ» սամսաթերթին խմբագրին, Գրիգորի Տէօլվեթեան բացվելու է և «Դաստիարակիս» հրատարակութիւնը տեղափոխվելու է Թէոդոսիայից Նախիջևան։ — Դպրոցի տեսչութիւնը յանձնված է Գրիգոր եպիսկոպոսին։

***

Երևանից հաղորդում են սեպտ. 24-ից տեղային վաճառականի հետևեալ գները՝ ոչխարի մսի ֆունտը արժէ 6 կոպ., տաւարինը 5 կոպ., եղի ֆունտը 30 կոպ., 10 հատ ձու 7 կոպ., հաւը 20—25 կոպ., քրդի պանիր ֆունտը 8 կոպ.։ Մի քանի օր առաջ ցորենի խալվարը արժէր 18—20 ռուբլ, իսկ այսօր արժէ 12—15 ռուբլ։

***

Պ. Գաբրիել Տէր Յովսէփեանց գրում է մեզ Երևանից, որ այնտեղի օրիորդաց դպրոցը որ 1868—1870 թիւը բարեկարգ դրութեան մէջ էր գտնվում, 1870 թվից շատ կորուստներ կրեց։ Վարժապետները և վարժուհին փոխվեցան, անհամաձայնութիւնը ցրվեց նոցա, որոնք նուիրել էին իրանց ազգային լուսաւորութեան գործին։ Մեր հաստատոր աղաները, թէև տեսնում էին ուսումնարանի թոյլ ընթացքը անուշադիր էին թողնում զբաղվված լինելով իրանց երևակայական գործերով։ Ուսումնարանը իր վախճանի կը հասնէր, եթէ չը յայտնվէր երիտասարդների մի այլ խումբ որոնք առանց վարձի շարունակեցին ուսուցչութիւնը մինչև 1874 թիւը։ Բայց և դրա դարձեալ անհետացան ուսումնարանից։ Ահա անցնում են չորս տարի որ չէ եղած մի կանոնաւոր հարցաքննութիւն։ Այժմ Վեհափառը յուլիս ամսից յանձնել է ուսումնարանի տեսչութիւնը Յովսէփ քահանայ Միլեանցին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ պատութիւնը, ինչպէս հաղորդում է „Deutsche Nachrichten“ լրագիրը, ունի այժմ մի զօրք խաղաղութեան ժամանակ, որ կազմված է 453,000 մարդից, այն ինչ Ֆրանսիայի զօրքը 422,000 մարդից է միայն բաղկացած։ Իսկ պատերազմի ժամանակ գերմանական զօրքի թիւը հասնում է մինչև 846,000 այն ինչ Ֆրանսիականը միայն մինչև 635,000։ Բացի սրանից պատերազմ սկսվելուն պէս յարաբերութեան միջոցները Գերմանիայում աւելի յարմար և զարդացած են քան թէ Ֆրանսիայում։

Լրագիրները հաղորդում են, որ մարշալ Բազէնը որ դեռ բանտարկութեան ժամանակ ստացել էր ՍՊԱՆԻԱՅԻՑ դօն-Կարլոսի զօրքը առաջնորդելու հրաւէրը, նորերումս պատրաստվում էր թողնել Բելգիական Լիէժ քաղաքը և ուղևորվել Սպանիա, բայց այժմ փոխեց իր դիտաւորութիւնը։—Հաղորդում են որ Սպանիայի տէրութեան զօրքերը Ջարդեցին կարլիստաններին Տաֆալլայի մօտ։

Սեպտեմբերի 25-ին վերադարձել են ԱԻՍՏՐԻԱ և մտել են Վիէննա մայրաքաղաքը աւստրիական ծովագնացները։ Մայրաքաղաքի զանազան դասեր, թէ զինուորականներ, թէ քաղաքացիներ վերադարձած ծովագնացներին փառաւոր ընդունելութիւն արին։ Այս մասին հրատարակում ենք մեր ընթերցողի ուշադրութիւնը ներկայ համարում տպված այդ նիւթին վերաբերեալ առանձին յօդվածի վրա։

ՖՐԱՆՍԻԱՅԻ Օրլէանեան կուսակցութեան շրջանում կրկին ծագել է խնդիրը Օմալ հերցոգին նշանակել Ֆրանսիական հանրապետութեան նախագահ, իսկ եթէ այդ աջողվելու չէ, այն ժամանակ գոնէ նախագահ այն քաղաքական հիմնարկութեան, որ այս րոպէիս դիտաւորութիւն ունին հիմնել Ֆրանսիայում, այն է սէնատ։ Յիշեալ կուսակցութեան նպատակը պարզ է՝ պատրաստի ունենալ Օմալ հերցոգին հանրապետութեան աթոռը բռնելու, եթէ այժմեան նախագահը, մարշալ Մակ-Մահոնը, որ և իցէ անսպասելի հանգամանքի պատճառով ստիպված լինի թողնել կառավարութիւնը։ Կարծում են որ քանի մի օտար պետութիւններն էլ համակրում են այդ դիտաւորութեանը։—Ֆրանսիայի կղերական կուսակցութիւնը յարուցել է խնդիրը Լուդովիկ XVI-ին սրբերի կարգի մէջ մտցնելու։ Լրագիրները խորհուրդ են տալիս պապին կարդալ Թագաւորի իր ձեռքով գրված յիշատակարանը, որ գտնվեցաւ ազգային գրադարանում և որ վկայում է, թէ Լուդովիկ XVI-որդը իր ամբողջ կեանքը անց է կացել խնդայների, ուրախութիւնների, որսի, զուարճութիւնների մէջ և զանազան թեթև կանանց մաշեցնող հասարակութեան մէջ և շատ անգամ հիւանդ է եղել անչափ շատ ուտելուց և անժուժկալութեան ուրիշ պատճառներից։

ԱՐՇԱՒԱՆՔ ԴԷՊԻ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԲԻՒՌՈ

1872 թվին Աւստրիայի և Ունգարիայի Վիէննա մայրաքաղաքից դէպի Հիւսիսային Սառուցեալ ծով ուղևորվից ծովագնացների մի ընկերութիւն Nordpol—Expedition անուանով, որի գլխաւոր կառավարիչներն էին՝ Պայէր, Վայբրէխտ և Գրաֆ Վէյլէք։ Այս արշաւանքն մեծ և անտանելի նեղութիւններ կրելով, շոգենաւն սառուցի մէջ մնալով, վերջապէս կարողացաւ ազատվել և գտնել մի նոր երկիր, որին աւստրիական այդ զիտնականները իրանց Կայսրի անունով անուանեցին „Ֆրանց Իոսէֆս լանդ „(Ֆրանց Յովսէփի երկիր)։ Այս ընկերութեան միջից մեռաւ մաշինիստ, Կրիզ, որին թաղեցին նոր գտած Վէյլէք անուանեալ կղզու մէջ։

Երշաւանքն սարսափելի ալեկոծութեան մէջ ընկղմվելով, վտանգն յայտնի և անփախչելի էր, եթէ բաղդաւորապէս օգնութիւն չը հասնէր ռուսաց մի շոգենաւ, որ և ազատեց աւստրիական ընկերութիւնը կործանումից։

„Nordpol-Expedition“ իր նպատակին հասնելուց յետոյ, վերադարձաւ Համբուրգի վրայով սեպտեմբերի 25-ին, երեկոյեան 5 ժամին Վիէննա։

Հանդէսը շքեղ էր։ Հիւսիսային երկաթուղու կայարանի մէջ երկու օր արդէն տոմսակները ծախված էին։ Փողոցները զարդարված էին դրօշակներով կայարանից սկսած մինչև Ֆրայյունգ փողոցի վրա գտնված Ճանապարհորդների համար պատրաստված բնակարանը։ Ճանապարհորդները մի կառքի մէջ նստած, որ ինքն Կայսրը ուղարկած էր նրանց ընդունելու համար, կամաց անցնում էին փողոցների միջով, շրջապատված ժողովրդի ահագին բազմութեամբ, որ ողևորված կեցցէներ էր արձակում։ Ծովագնացները, գոյներն փոխուած, սևացած ցրտից, որ 40% աւելի է եղել, սիրով բարևում էին ժողովուրդը, այս ձևով իրանց շնորհակալութիւնը յայտնելով հասարակութեանը իր սիրելի ընդունելութեան համար։

Երշաւանքը բերել է իր հետ նոր գտած երկրից վայրենի անասուններ։ Բնակիչներին գտած չեն նոր երկրի վրա։ Բայց գիտնական պարոնները դիտաւորութիւն ունին կրկին արշաւանք գործել նոյն կողմերը։

Ճանապարհորդների Վիէննա մտնելու օրը պիտի տեղի ունենար մի հանդիսաւոր նիստ Վիէննայի աշխարհագրական ընկերութեան մէջ, Աւստրիայի ժառանգ, երցհերցոգ Ռուդոլֆի նախագահութեամբ, որ յիշեալ ընկերութեան հովանաւոր է համարվում։

Վիէննա. Ա. Վարդապետրիկեան

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՏԱՍԽԱՆ

Պարոն Գ. Շերմազանեանը—մեր ուխտեալ կրիտիկոսը—կրկին յայտնվեցաւ Արարատ ամսագրի Ը-րդ համարի մէջ։ Մի մարդ, որ մինչև այսօր չէ ցոյց տուել գրական ասպարիզում որ և իցէ նշանաւոր գործ, մի մարդ, որ մի հասարակ երգի միտքն անգամ հասկանալու ընդունակութիւն չունի, *) իւրեան թոյլ է տալիս քննել մի ամբողջ գիրք—Փունջի I հատորը։ Մենք այդպիսի կրիտիկոսին առաջին անգամ (տես Մշակ 1873 ամի № 24) պատասխանեցինք արհամարհանքով և կրկին նորա հետ բանակռիւ ունենալու ախորժակ չունենք։ Բայց չենք կարող լռել, երբ պ. Շերմազանեանը մեղադրում է մեզ գրական գողութեան մէջ։ Նա ասում է, թէ ունեցել է «կտակ» վերնագրով մի յօդուած, տուել է նորան մեզ կարդալ և մենք այնտեղից քաղել ենք մեր «կտակ» և «Թիֆլիսեցու յիշողութիւն» կոչուած երգերը։ Այդ ճշմարիտ է, պարոնը մի անգամ տուեց ինձ կարդալ մի աղուէսի պատմութիւն, որոյ մէջ նկարագրում էր, որքան յիշում եմ, թէ որպէս մի երևանցի վաճառել էր Թիֆլիսեցուն մի հատ աղուէս և առուտուրի մէջ խաբել էր նորան։ Թիֆլիսեցին զայրացած դորանով կտակում էր իր համքաղաքացիներին յաւիտեան անհաշտ մնալ երևանցիների հետ և միշտ նորանց „մածուն ուտողներ“ կոչել, և այլ այդպիսի յիմարութիւններ։

Այժմ Փունջի ընթերցողներին ենք թողնում դատել, արդեօք մեր «կտակ» և „Թիֆլիսեցու յիշողութիւններ“ կոչուած բանաստեղծութեանց մէջ կայ աղուէսի և մածունի վերաբերեալ մի խօսք։

Իսկ թէ մեր „Իսրայելը Բաբելոնում“—«Որբ օրիորդ» և «Հայ օրիորդ» երգերը քաղուած են պ. Դիլզադեանի բանաստեղծութիւններից, պատասխանում ենք,—ունի՞ արդեօք պ. Դիլզադեանը բանաստեղծութիւններ, որտեղ են տպուած նորա, այդ մեզ յայտնի չէ, և խնդրում ենք հեղինակից իւրեան բողոքել, եթէ գտնում էր նա մեր և իւր երգերի մէջ նմանութիւն. եթէ ոչ մենք նորա ինքնակոչ փաստաբանի խօսքերը բանի տեղ չենք դնում։

Բաֆֆի

*) «Դայեակ» երգի մէջ կրիտիկոսը գտնում է մաքերի հակասութիւններ, թէ պառաւի և երիտասարդի խօսքերը հակառակում են միմեանց։ Արդարև, եթէ երիտասարդները այնպէս մտածէին, որպէս Շերմազանեանն է մտածում, հաւանական է, որ նոցա և պառաւների խօսքերի մէջ կը տիրեր կատարեալ համաձայնութիւն։ Բարեբախտաբար այդպէս չէ լինում...

7000

Туногъ чистаго, натуральнаго

КАХЕТИНСКАГО ВИНА

Купленныхъ у разныхъ Кахетинскихъ помѣщиковъ, продаются сообразно достоинству

отъ 70 копѣекъ до
2 рублей тунга

Въ лавкѣ Мелько Минаича МАКАРОВА.

Въ Тифлисѣ, на Площади, у Авлабарскаго моста послѣдняя лавка подъ Метехкимъ Замкомъ.

7000

Թունդի իստակ, բնական

ԿԱԽԵՏԻՈՒ ԳԻՆՈՒ

Որ առնված է Կախէթու զանազան կալուածատէրերի մօտ, ծախվում է համեմատ արժանաւորութեան

70 կոպէկից սկսած
մինչև 2 ռուբլ թունդի

Մելքօ Մինասեան ՄԱԿԱՐԵԱՆԻ մօտ։

Թիֆլիսում, Մետեխի բերդի մօտ, վերջին խանութը, կամուրջի մօտ հրապարակի վրա։

3 (3)

ՇԱՄՊԱՅՑՆ ԳԻՆՈՒ ՇԻՇ (բուտիլկա)

10 ԿՈՊԷԿՈՎ ՀԱՏԸ

Նոյնպէս և այլ ապակեղէն ամաններ, գործարանի գներով, մեծ քանակութեամբ (օպտով) կարելի է ստանալ Գուարէրի ապակու գործարանի պահեստի մէջ Թիֆլիսում, Գվօրցովի փողոցի վրա, Երծրունու գալէրէում, Էկսէլրիբա եղբայրների գրասենեակում № 168. Նոյնտեղ ընդունվում են պատուէրներ և զանազան ապակեղէնի համար։

11 (20)

ԴԱՒԻ-ԴԱՌԱՌԱ

(Գիւղական Թատրոն ՁՈՐՍ գործդ. Հանդիպած ՅԱՒԵԼՈՒԱԾՈՎ)։

Հուտով մամուլի տակից դուրս կգայ վերոյիշեալ գիրքը։

Սորանով յայտնվում է հետևեալ պարոններին՝ (Երևան) Յ. Գուլամիրեանցին, (Ալէքսանդրապոլ) պ. Աղայեանցին և պ. Դսալեանցին, (Ախալցխա) պ. Ղազարեանին և պ. Վրաթանեանին շուտով ուղարկելու մեզ մեր ստորագրական ցուցակները՝ ընդ նմին (եթէ հաւաքվել է) և դրամները։

Ուսանող.

Պատրաստում է բէալական ուսումնարանի և կլասիկական գիմնազիայի առաջին երեք դասարանների համար, ընդունելով երեխաներին իր մօտ բնակելու։ Հասցէն Վ. օրօնցօվի Նաբերէժնայա, Ռէլեյեվի տունը։

4 (5)

Վարդանեանցի գրավաճառանոցում և «Մշակի» խմբագրութեան մէջ ծախվում է

Գիմբեցու Ա. ԸՆԹԱՑԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ Ներսիսեան Դպրոցին. գինը 30 կպկ.

3 (5)

Մայրենի լեզուի երկրորդ տարուայ երկրորդ տիպը այլ և այլ փոփոխութիւններով, նոր յօդուածներով և մանաւոր պատկերներով լրացած, ծախվում է նոյն իսկ աշխատասիրողի մօտ, պ. Ա. Տէր Ղևոնդեանի ֆոտոգրաֆիայում Միքայելեան կամուրջի վերա և „Մշակի“ խմբագրատանը։ Զը նայելով ապագրական բոլոր ծանրութիւններին գինը անհամեմատ աժան է նշանակուած, այն է՝ հատով գնողներին 35 կոպ. 10 մինչև 100 գնողներին 33 կոպ. իսկ հարիւրից ոչ պակաս գնողներին 30 կոպ.։ Օտարաքաղաքացիք թող իրանց պահանջներով բարեհաճեն դիմել ուղղակի աշխատասիրողին.

Тифлисъ. Николаю Теръ—Гевондіанцъ կամ վերը յիշված խմբագրատունը։ Ցանկացողների պահանջը անմիջապէս կը կատարուի։

Մայրենի լեզուի ա. տարին ծախվում է պ. Վարդանեանի գրատանը, և „Մշակի“ խմբագրատանը հատով գնողներին 45 կ. 10—50 գնողներին 43 կ. իսկ 50—100 գնողներին 40 կ.

(4) 2

Г. г. Алихановъ, Мизандари и Саванели съ 1-го Октября настоящаго года предлагаютъ *уроки пѣнія и фортепіанной игры* въ помѣщеніи школы Г-жи Жаба на Консульской улицѣ въ домѣ Мирзоева бывшій Крижановскои.

Объ условіяхъ можно узнать въ школѣ съ 9 утра до 2-хъ часовъ по полудни; гдѣ и просятъ желающихъ записываться заблаговременно.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը նշանակում է ածը-դախօսութիւն (ասրդ) և երեք օրից յետոյ կրկնաձրդախօսութիւ (պերեսօրժկայ) կապալ (իջարայով) տալու Դպրոցապատկան այգին Սօղանլուխայ։ Պայմանաթուղթը (կանդիցիան) ցանկացողը կարող են կարդալ Հոգաբարձութեան գիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակից և տօներից, առաւօտեան 10 ժամից մինչև 12 ժամն կէսօրի, և ածրդախօսութեան և կրկնաձրդախօսութեան օրը ներկայանալ նոյն Դպրոցումը Հոգաբարձութեան խորհրդարանի մէջ գրաւականաւ, որ պիտի լինի կամ արքունական անանուն բիլէթ և կամ առ ձեռն դրամ (նաղդ փող) համաձայն պայմանաթղթին։ Ածրդախօսութիւնը լինելու է 1874 թուականի հոկտեմբեր ամսոյ 10-ին և կրկնաձրդախօսութիւնը նոյն ամսոյ 14-ին երեկոյեան 7 ժամից ց'10 ժամն։

ՏԵՂԵԿԱՑՈՒՑ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3. ԹԻՖԼԻՍ. 1874.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Հոկտեմբերի 2-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլամպրիալ). .	5	90
Բամբակ Երևանա (հին սերմից) . . .	4	80
„ Ամերիկայի սերմից	6	20
Բուրդը թույլ . . .	6	50
Թարաքամի . .	4	20
Շաքարը ռոսի (բրօդկու)	8	50
„ միւս տեսակը .	8	40
„ զագրան, արանդիա	4	80
„ մաքսը վճարած	7	90
Շաքարաւազը Ռոսի . .	7	25
Գահվա Լիվանի լաւը . .	17	
„ Մոկո չատ լաւը	18	50
„ Մարախկոի ցածր	15	50
Աւիւրը Երևանի . . .	1	
Աւիւրը Գեանջա հասարակ. . . .	1	10
„ Շորագեալու. .	1	10
Գարին	„	70
Մոմ.	10	30
Փոխանակագիր Գօլսի	6	65
„ Դավրէժի	4	53
Լոնդոնի կուրսը (Օդեսայի վերայ) 1 լիրան արժէ. .	7	17
Մարգել և Փարիզ 352 ֆր. արժէ	100	

ՀԵՌԱԳԻՐ

Քանի բառից կազմված հեռագիրը ամէ՝

	Ր.	Կ.
Ալեքսանդրապօլ .	1	
Ախալցխա . .	1	
Ատարխան . .	1	
Բագու	1	
Գանձակ. . . .	1	
Գօրի. . .		50
Երևան	1	
Շամախի. . . .	1	
Կօղժօր . . .		50
Քութայիս . .	1	
Մօզդօկ.	1	
Մոսկվա. . . .	2	
Ս. Պետերբուրգ .	2	
Հին Նախիջևան .	1	
Նոր-Նախիջևան .	1	
Նիժնի-Նովգորոդ	2	
Փոթի.	1	
Աստրխան . . .	2	75
Անգլիա. . . .	3	75
Գերմանիա . .	2	63
Թուրքիա (Եւրօպ)	3	
„ (Փոթիով)	3	75
Ֆրանսիա . . .	3	50

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Երթևեկ հիւանդների համար գտնվում է Երևանեան հրապարակի վրա, Զեմսկոյի տանը և բաց է ամեն օր հիւանդների ընդունելութեան համար առաւօտը 8 ժամից մինչև 10 ժամը։

ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 8 ժամին 18 րոպէ առաւօտեան։ Մինչև Սուրամ (խառն գընացքը) երեկոյեան 8 ժամ. 17 րոպէ։

	առաւ.	երեկոյեան
Թիֆլիսից	8. 18	8. 17
Մցխէթ	9. 18	10. 48
Գորի.	11. 39	1. 43
Սուրամ.	1. 52	4· 30
Քութայիս	7. 55	
Փոթի.	11. 27	
	առաւ.	
Փոթիից	7. 38	
Քութայիս	10. 12	
Սուրամ.	4. 57	
Գորի.	7. 23	
Մցխէթ.	9. 52	
Թիֆլիս.	10. 49	

Թիֆլիս դալիս է ճանապարհորդների գնացքը երեկոյեան 10 ժամին 49 րոպէ։

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գորի. .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3, 92	2, 18
Քութայիս	9.	6. 75	3. 75
Փոթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ընդունում է

Ռուսաստան և Եւրոպա ամեն օր, բացի կիրակի։

Երկուշաբթի

Երևան (Զուլֆ, Պարսկաստան) Օզուրգէթ, Սխալցխայ, Բէլի Կլիուչ, Բագու և Գանձակի նահանգ (ծանր փոստ)։

Երեքշաբթի

Սև և Ազով ծովի ռուս նաւահանգիստներ (ձմեռը) Բագուի և Գանձակի նահանգներ (թեթև փոստ)։ Նուխի (Յարսկի Կօլօդցի, Զաքաթալ, Ազնաբ, Թէլաւ, Լազօդէխ) թեթև փոստ։

Չորեքշաբթի

Երևան, (Զուլֆ, Ալէքսանդրապօլ, Նոր-Բայազեդ) Զուզղիդ։

Հինգշաբթի

Սև և Միջերկրական ծովի տաճկաց նաւահանգիստներ։

Ուրբաթ

Երևան (Զուլֆ, Պարսկաստան, Ալէքսանդրապօլ) Օզուրգէթ, Ախալցխա, Բէլի Կլիուչ, Սև և Ազով ծովի ռուս նաւահանգիստներ, (ամառը), Բագուի և Գանձակի նահանդները (թեթև փոստ)։

Շաբաթ

Նուխի, (Յարսկ. Կօլօդ. Զաքաթ. Ազն., Թէլաւ).

Փոթի-Թիֆլիսեան երկաթուղու կէսաբ ամեն օր, բացի կիրակի։

ՆԱՄԱԿՆԵՐ

	կոպ.
Բաց նամակը ամէ. .	5
Ռուսաստան նամակը	10
Գերմանիա, Աւստրիա	10
Ֆրանսիա.	13
Անգլիա	14
Շվէյցարիա. . . .	14
Թուրքիա (կ. Պոլիս .	20
Թիւրքիա (ցամաք) . .	20
Իտալիա	16
Ամերիկա	28
Պարսկաստան . . .	10
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ՓՕՍՏԻ ԿԱՌՔԵՐ

Թիֆլիսից Վլադիկավկաս ամեն օր ամառը 6 ժամին կէս օրից յետոյ իսկ ձմեռը 4 ժամին։

Թիֆլիսից Պիատիգորսկ, Ստավրապոլ և Բօստով հինգշաբթի և շաբաթ օրերը 6 ժամին առաւօտեան։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

(Սեպտեմբերի 20-ին)

Լոնդոն մի բուրլ ամէ $33\frac{13}{32}$ պէնս (փոխանակ 40 պէնս).
Փարիզ մի բուրլ ամէ $350\frac{1}{2}$ սանտիմ (փոխանակ 400 սանտիմ).
Առաջին 5% փոխառութեան տուտակ . . . . . $177\frac{1}{4}$
Երկրորդ . . . . . $173\frac{3}{4}$
5% բանկի տոմս. 1 շրջանի 98
„ „ „ 2 „ $97\frac{1}{2}$
„ „ „ 3 „ $97\frac{1}{2}$
Երկաթուղիների գլխ. ռուս ընկերութ. ակցիա ամէ . $146\frac{3}{4}$
Մոսկով—Բիազան երկաթուղի. . . . . —
Руск. Общ Парах. и Тор $552\frac{1}{2}$
Кавк. и Мерк. . . . . —
Վարշավի—Տէրեսպոլի երկաթուղին. . . . . —

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—Թիֆլիս. Յովհաննէս Երեցփոխեան։ Դուք ցոյց էք տուել մեզ «Մշակի» վճարի ստացականը։ Ուրեմն ճշմարիտ է որ վճարել էք, բայց մենք մեղաւոր չենք... խմբագրութիւնը չը հասաւ գումարը... դուք էլ մեղաւոր չէք...

—Թիֆլիս. Մելքումով։ Ստացանք փող, շնորհակալ ենք։

Дозволено Цензурою. Тифлисъ, 2 Октября 1874 г. Типографія Меликова и К-° Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ